

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՅԻԷ ԲՂԲԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԵ Ե ՈՒՂՂԱՆ ԱՌ

Վարչութիւն «ՆՈՐ ՕՐ» Լուսագրի

ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռագիրներն եւ չեն դարձուիր

ԱՐՏՕՒՏԱՏԵՐ 3. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

ԱՎՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԳԻՊՏՈՍ

Գահիրէի համար	արեւկան	50
» » վեցամսեայ		30
Շրջակայից »	արեւկան	60
» » վեցամսեայ		35

ԱՐՏԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Տարեկան	Ֆրանգ	18
Վեցամսեայ	»	10

ՌՈՍՏՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	րուբլի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱՎՃԱՆՈՐԳԱԳԻՆԸ ԿԱՆԻՅԻ Է

ԵՒ ԲՂԲԱՍԱՐԻ ԾԱՌՔԸ

ԹԵՐՔԻՆ ՎԱՐՉՈՒԹԻԱՆ ՎՐԱՅ Է

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ԲԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՍՈՒՑՈՒՑԻՑ ԾԻՉ ՏԻՄԱ ՍՄԲԱՏ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱԻԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ԿԸ ՓՈՒԹԱՅ ԹԱՅՏԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՏԻՄԱ ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐՈՒԱՆԷ ՍԿՍԵԱԼ ԴՈՒՄԱՐԵԱԼ Է «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ:

22 ՍԵՊՏ. 900

«Նոր Օր»-ի վարչութիւնը կը խնդրէ Արտասահմանի ու կողմասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել կրկնողով մը «Նոր Օր»-ի պակաս ստացուած թիւերը, որոնք պիտի ղրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր կողմասի հայ թերթիներու ու Հանդէսներու Պատ. խըմբադիրներէն որ իրենց հրատարակութիւնները փոխանակեն «Նոր Օր»-ին հետ:

ՀԱՅ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՆ ՈՒ ԵԳԻՊՏԱՀԱՅՆ

Հայաստանի որբանոցներուն մէջ այսօր հազարաւոր որբեր պատըս պարուած են. բոլոր այդ որբերը պաշտպանելու ու խնամելու հոգը մէկ անհատի մը վրայ չէ՛ ծանրացած, հապա տարբեր մարմիններու մէջ բաժնուած է:

Աշխարհի ամէն մէկ անկիւնէն լուսաւորչական, Պապական, Բողոքական ամէնքն սիրայօժար գործին խանութած են, ու հետզհետէ կը բանան որբանոցներ ի նպաստ Հայ որբերուն. մին իւր գրիչովը, իսկ միւսն իւր զրամովը օգնութիւն կը փութացնեն այդ խեղճուկներուն:

Մենք պիտի խօսինք նիւթապէս

ու բարոյապէս այդ որբերը հոգացող մարմիններու, և անոնց գործունէութեանը վրայ:

Որո՞նք կրնան ըլլալ որբերը հոգացող մարմինները. բնական է թէ անհասները, մաւնոյր և այդ նպատակաւ կազմուած ընկերութիւնները: Սկսինք Եգիպտոսէն և տեսնենք թէ որո՞նք են այդ տարբեր որբ կրնան մեր աչքին զարնել:

Ա. Անհասները. — Դիւանագիտական, դատաստանական ու վաճառականական ճիւղերուն իւրաքանչիւրին մէջ Եգիպտոսահայն փայլուն ու նախանձելի դերք մը ունեցած է միշտ. անոնցմէ ոմանք մինչև իսկ առաջնակարգ անգիր գրասած են Եգիպտոսի մէջ. բարդին ճոխութիւնը չէ զլացած զանոնք օժտել առատ զանձերով: Ուրեմն ինչո՞ւ չ'օգտուին մեր որբերն ալ այդ առատ զանձերէն. և եթէ կը սիրենք որ Հայ որբն պաշտպանուի ու խնամուի, առանց կորուսանելու իւր ազգութիւնն ու տոհմական զգացումներն, զիմենք այդ անուններուն:

Մենք չը պիտի կրնանք լուս անցնել այդ անուններուն վրայ, թէպէտ հանրութեան ըլլան ծանօթ:

Ուրեմն վստահ ենք այլ ևս, որ Եգիպտոս իւր պարունակած անհատներովն, ասպարէզ ունի Հայաստանի որբերուն օգնութիւն հասցնելու. բայց ասի չը բաւեր. մենք կը փափաքինք գիտցնել որբասէր հանրութեան և ի մասնաւորի Ընտրելի-միացեալ չորս որբասիրաց ընկերութիւններուն(*), թէ տարեկան միջին հաշուով որբան գրամ կրնայ ղրկուիլ Եգիպտոսի սահմանէն ի նպաստ որբերու. ատոր համար, թոյլ տրուի մեզ, կարգաւ, առանց դաւանանքի խտրութեան նըշանակել Եգիպտոսահայուն ձեռքը կամ գանձին մէջ գտնուած հարստութեան քանակութիւնը, նուազագոյն հաշուով(**):

Ա. Մէկ միջոցն ունի. — հարստութիւն Պողոս փաշա Նուպարի. որուն մէկ մասը կը կազմէ իւր անձնա-

(*) Պէտք ունիմք գիտցնելու: (**) Մենք պէտք չունինք հարստութեան ճիշտ գումարը տալու, կրնայ ըլլալ կէս միլիոնէն աւելի կամ պակաս հաւաքար է որբոց համար:

կան հարստութիւնը զոր կրցած է ստանալ շնորհիւ իւր արուեստի հրմտութեանց ու հաշուազէտ գործառնութեանց. իսկ միւս մասը, իւր հօր ողբացեալ Նուպար փաշայի ժառանգութիւնէն:

Բ. Կես միջոցն ունի. — հարստութիւն Տիգրան փաշա Ապրայի. Ապրայեան իշխանական ցեղէ, նախկին Արտաքին Գործոց Նախարար Եգիպտոսի:

Գ. Յիսուն հազար ունի. — հարստութիւն Յարութիւն փաշա Եգիպտոսէն. կրթական Գործոց Նախարարի խորհրդական:

Դ. Յիսուն հազար ունի. — հարստութիւն Զորայ փաշայի. խորհրդական Պատերազմական Գործոց Նախարարութեան:

(Շարունակելի)

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ ՈՒ ԾԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Օսարևերու մուսքը Չինաստան. — Միսիոնարներ. — Կարողիկ մկրտուած Չինացիները եւ սեղական իշխ. զայրոքը. — Բրիտանից կոստածը. — Գերմ. դեպուս Պ. Բեթթերի սպաննութիւնը. — Պատերազմի սկիզբը. — Թիէն-Յիւնի եւ Բեյֆիւնի գրաւումը:

Առ այժմ Եւրոպայի Գապիւնէները մտազբազ ընող երկու խնդիրներ կան որոց մին թրանսվալ, իսկ միւսն է Չինաստան. ասոնք մէկզմէկէ սա տարբերութիւնը ունին՝ որ թրանսվալի խնդիրը ուղղակի Անգլիոյ և Պօնդիներու միջև սկսած ու թերևս անոնց մէջ լինանալիք խնդիր մ'է, որուն օտար տէրութիւններուն ոչ մէկը միջամտելու պատճառ մը չունի. ասի պարզապէս ոսկի հանքի կռիւ մ'է Չինացիներ և Գոնդիներ մէջ:

Մինչդեռ Չինական խնդիրը որ Ծյարագոյն-Արևելքի խնդիրն է, բոլորովին տարբեր, կրնամ ըսել թէ՛ աւելի Արևելքի խնդրոյն հետ ազգականութիւն ունի. արդէն Եւրոպայի դիւանագէտները սկսած են համոզուիլ թէ՛ Չինաստանի խնդիրն ալ թուր-

քիոյ խնդրոյն չափ ծանրակշիռ ըլլալու մօտեցած է. Եթէ սոյն երկուքին ծագումը քննենք պիտի տեսնենք որ միեւնոյն աղբիւրէն կը ծնին:

Արևելեան խնդիրը ծագում առած է այն պատճառաւ որ՝ թուրք կառավարութիւնը իւր անբաղաքաւ կիրթ և կեղտոտ վարչութեամբն միշտ քաջալերած է այն ամէն օտարատեաց յարձակումներ որոնք կը զինուին, իւր հողին վրայ բնակող քրիստոնէաններու և օտարներու ընչից, պատուայի և կենաց ապահովութեանը դէմ. և որովհետեւ թուրք կառավարութիւնն ու իրէն երաշխաւորութիւն չունի, իւր այդ վարչութիւնն ուղղելու, սէտք կուգայ որ պատժուի. պատիժ մը զոր Եւրոպական տէրութիւնները միայն կրնան տնօրինել իրենց միջամտութեամբը:

Բնական է թէ իւրաքանչիւր տէրութիւն իւր հպատակներուն օգնութեան փութալու և անոնց շահերը պաշտպանելու համար՝ ամէն իրաւունք ունի միջազգային օրինաց համաձայն միջամտելու և բռնաբարող տեղական վարչութիւնն ի կարգ հրաւիրելու. ուրեմն արևելեան խնդիրը թրանսվալի մէջ պատահած ոսկի հանքի վէճը չէ, հապա իսլամ՝ վարչութեան շուրթն տակ ապրող օտար հպատակներու և քրիստոնէից կենաց և ընչից ապահովութեանը համար քրիստոնէայ պետերու կողմէ՛ իսլամ խաւրիպային դէմ՝ լարուած պայքարն է, ինչպէս նաև Չինական խնդիրը՝ Չինական սահմանին վրայ ապրող քրիստոնէից ազատութեանը համար Մայր կայսրուհոյն դէմ՝ Եւրոպայի պետերու կողմանէ պատրաստուած արշաւանքն է: Չը մոռնանք հոս դիտել տալու որ՝ եթէ քիչ մը ևս այս երկու խնդիրներու հոգնաբանական քննենք, պիտի տեսնենք որ հոս ալ ոսկի հանքի հոտեր դուրս պիտի գան:

Արևելեան ու Չինական խնդրոց մէջ Տէրութեանց անհամաձայնութեան բուն պատճառն ալ ո՛չ ապաքէն դարձեալ այդ կարմիր մետաղն է, որ իւրաքանչիւրին ապագայ երկամական ոյժն պիտի կազմէ. ինչ և եցէ վերադառնանք մեր նիւթին:

Թուրք վարչութիւնը՝ գլուխ ունենալով Սուլթանը, ինչեղանակաւ որ

կը վարուի հանգէպ քրիստոնէից, նոյն եղանակաւ կ'ընթանայ Չինական վարչութիւնը՝ գլուխ ունենալով Մայր-կայսրուհին:

Արդարեւ Չինաստան Ասիոյ մէկ անկիւնը Ծայրագոյն Արեւելքի մէջ քանի մը հազար տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող թագաւորութիւն մ'է մօտ 400 միլիոն բնակիչներով բարբարոս և մահաճետական տարրերէ բաղկացեալ, այդ հազարաւոր տարիներու ընթացքին, օտարներու հետ երբէք յարաբերութիւն հաստատած չէ:

Եւրոպական տէրութիւնները յանցանքնկատելով զայս, որու պատճառներուն վրայ «Արեւելք և քաղաքակրթութիւն» յօդուածին մէջ արդէն բացատրութիւններ տրուեցան մեր կողմէն, (*) բռնադատեցին Չինաստանը որ բանայ իւր դոներն Եւրոպական քաղաքակրթութեան, որպէսզի օտարները ազատ մուտք ունենան հոն. Չինաստանի թէպէտ հաճելի չէր թուէր այդ առաջարկն, բայց բռնադատութեան ներքեւ ընդունեց, որու վրայ զանազան թուականներու մէջ կ'ընթացան դաշնագրութիւններ որոց համաձայն, 1848էն ի վեր Չինաստանի այլևայլ քաղաքներուն մէջ օտարներու մուտքն վերջապէս արտօնուեցաւ:

Եւրոպայի առաջնադաս (միսիոնար) օգուտ քաղելով ժամանակին այդ շնորհներէն, բարձրական, պապական փութացին դէպ ի Ծայրագոյն-Արեւելք ուր սկսան քրիստոնէութիւնը տարածել (փրօփականտ), այնպէս որ մի քանի տարիներու մէջ հազարաւոր Չինացիներ ընդգրկեցին ոմանք պապականութիւն, ոմանք ալ բողոքականութիւն. միսիոնարներու այս վարմունքը, բնիկ Չինացիներու սիրայօժար կրօնափոխութիւնը՝ Չինական կառավարութեան զայրոյթը այն աստիճան զրգոած էր որ այդ հոսանքին առաջն անուկու համար, կառավարութիւնը մինչև իսկ մահու սպառնալիքով սաստեց այն ամէն անոնք որք պիտի խաղային Չինական կրօնքի և ազանդներուն հետ. բայց ի զուր, Չինաստանի մէջ հինգ հարիւրէ աւելի կաթոլիկ միսիոնարներ՝ հրաշալի կերպով կը շարունակէին տարածել կաթոլիկութիւնը այդ ցեղին մէջ. ըստ վատիկանի պաշտօնական տեղեկութեանց Չինաստանի մէջ կաթոլիկ մկրտուող Չինացիներու թիւն այսօր 350 հազարը կ'անցնի, որոնք իրենց համար բազմաթիւ եկեղեցիներ ունին. ի մի բառ Չինական կառավարութիւնը չուզեր որ այդ նորեկներն զան և իւր երկրին ազանդին ու հուսադրին վրայ խաբէական ձևերով, ճնշումներ բնեն:

Միւս կողմէն օտար շուհասիրութիւնն և նամանուանդ մի քանի տարիներ առաջ Թորդ-Ալթիւրի և ուրիշ կարևոր նաւահանգիստներու զբաղումը, մանտարիներու միաքերը պատրաստեց դէպ ի վրէժխնդրութիւն հանգէպ քրիստոնէին. ժողովուրդը մա-

սամբ մը անտարբեր էր. ասոր անտարբերութենէն զայրացած, Շանթի թունկի փոխարքան դիմեց Պոֆարնետու ազանդին ու շարժումը սկսաւ. Գանթօնի փոխարքայ Լի-Հունկ-Շանկ, նաև իշխան թուան քաղաքեցիին այդ շարժումը, որ քիչ ատենուան մէջ ծաւալեցաւ բոլոր երկրին մէջ. ինչպէս որ թուրքը՝ քրիստոնեան և ի մասնաւորի Հայն հալածելու համար կը զինէր Քուրդն ու Գասպուսպոյցի, Չինաց կայսրուհին ևս զինեց իւր Պոֆարնետն: Ասոնք Քուրդէն աւելի մարմնամարդական հրահանգներու վարժ՝ յարձակեցան քրիստոնէից թաղերուն վրայ ու կորտեցին զանոնք անխնայ. կեղծ ու անկեղծ տիեզերական զայրոյթի արձագանգն հետզհետէ կը հասնէր մինչև Ծայրագոյն-Արեւելք ոճրագործներու ականջին, բայց ատոնք անտարբեր կը շարունակէին իրենց գործը. հեռագիրներն յաջորդաբար կը գուժէին այդ ողբերգական տրամներու արդիւնքն:

Եթէ կար ցաւալի կէտ մը այդ խռովութեանց շրջանին մէջ այն ալ իրողութիւնները ճշգրտեամբ չէին հեռագրուէր. մէկ շաբաթուան մէջ իրարու հակասական կարգ մը հեռագիրներ կը հասնէին Եւրոպա:

Ընթերցողը կը յիշէ անշուշտ Յուլիս ամսոյ մէջ հասած հեռագիրներն որոց մին կ'աւետէր Չինաց Մայր-կայսրուհոյն թունաւորութիւնը ու վերջոյ խելագարիւր, որ այսօր ստուած է, իսկ միւսն կը գուժէր զեսպաններու կոտորածն, որոնք ընդհակառակն զերծ մնացած են, ի բայ առեալ Պ. Քեթլէր, գերմանական դեսպանն զոր Պօքսըրները սպաննեցին իւր ձիուն վրայ:

Պ. Քեթլէր երկար տարիներէ ի վեր Գերմանիոյ ներկայացուցիչն եղած էր, ու իւր Չինարէն լեզուի հրատարակիչը սարսափ ազդած էր Մայր-կայսրուհին:

«Նիւ Յրայէ Բրէս» գերմանական թերթին քաղած տեղեկութիւններուն համեմատ՝ Մայր-կայսրուհին խիստ կ'ատէր Պ. Քեթլէրը, որովհետև սա լաւ գիտնարով Չինարէնը, դիւրութիւն ունեցած էր Չինացի գիտուններու մանտարէններու և պալատականներու հետ մտերմական յարաբերութիւն հաստատել և կը կասկածէր որ մի գուցէ իւր պալատի զաղտնիքներն խլելով հաղորդէր Եւրոպա:

Գերմանիոյ կայսրը այս ոճիրէն խորապէս բորբոքած բանախօսութիւն մը ըրաւ իւր դեսպանին մահուան վրէժը լուծելու համար դէպ ի Չինական ցամաքը զրկուող զօրագունդերուն և ըսաւ. «Քաղաքակրթութիւնը առանց քրիստոնէական հիման խախտու է, ու քիչ ատենէն կ'անհետանայ: Դուք պիտի երթաք պատերազմի լաւ զինեալ թշնամույ մը դէմ»:

«Յորչափ գերմանական ու օտար գրօշակներ չը ծածանին Չինաստանի բերդերուն վրայ, հանգիստ չը պիտի ընեն. օգնէ Աստուած որ յաղթական ելնեն Չին գրօշակներն ու Չին հետ միասին քրիստոնէութիւնը մտնէ այդ երկրին մէջ»:

ՓԱՐԻԶԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ ՍՈՒԹԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՐՍԱՆԱՆԱՅ ԲՈՒԷ ՌԻ ՀԱՄԱԿՐԹԱԿԱՆ ԲՄԵԱԶԵԻ ԱՌ ՀԱՅՍ

Ընթերցողը կը յիշէ անշուշտ թէ 1899 տարւոյ սկիզբն Ռուսիոյ վեհափառ և խաղաղասէր Չարին փափարանացը համեմատ Լահէի մէջ Համաժողով մը գումարուեցաւ, որու մասնակցեցան ամէն տէրութեանց կողմէ արտաքոյ կարգի ներկայացուցիչներ. Հայն ալ, թէպէտ անիշխան, կրցաւ ներկայացնել իւր տրտունջն Համաժողովոյ նախագահին, որուն համար մասնաւոր պատուիրակներ ուղևորեցան ի Լահէ:

Լահէի Համաժողովոյ նպատակն էր ըստ կարելոյն տէրութեանց միջև ծագած վէճերն ու խռովութիւններն, փոխանակ թնդանօթով վերջացնելու, գրելով կարգադրել, ու յանձնել միջազգային իրաւարար դատարանի մը, որոյ արձակած վճիռը գործադրելի ըլլար. եթէ յաջողէր, այլևս արիւն չը պիտի թափուէր, ու անոր տեղը միմիայն մեղան պիտի սպառէր:

Բայց դիւանագէտները գիտնալով հանդերձ որ պատերազմը պարզապէս վարենական յագուրդ մ'է, միանգամայն նախատեսելով որ ի սէր աշխարհի խաղաղութեան գումարուելը այդ նիւտերն ու եղած աշխատութիւններն ս և է գործնական արդիւնք արտադրելէ զուրկ են, մասնակցեցան Համաժողովոյ աշխատութեանց. ինչ ըրին ատոնք. ինչ որ ըրին իրենց նախորդները. սրովհետև առաջին անգամ չէ որ այսպիսի Համաժողով մը գումարուեցաւ. միջազգային պատուիրակը իւր էլերուն մէջ նշանակած է արդէն մի քանի նմանօրինակ ժողովներ, որ զանազան թուականներուն, գումարուած են միևնոյն նպատակու առանց գործնական արդիւնք մը կարենալ արտադրելու:

Եթէ այս կարգի Համաժողովները ո և է ծառայութիւն կրցած են մաստայանել, այն ալ՝ պատերազմի մէջ զէնքերուն ըստ կարեաց խցճահարութեան սահմանին մէջ գործածութեան չափ մը դնելն եղած է:

Լահէի Համաժողովէն վերջը սկսաւ Փարիզի մէջ գումարուիլ Աշխարհային Յուլիանոսի և Սալոնի, Խաղաղութեան Համաժողովն որու մասնակցեցան ամեն ազգէ պատգամաւորներ. Հայերէն ալ ներկայ էին Պ. Առաքելեան, «Մշակի խմբագիր և Թուրքերէն՝ Ահմէտ պէյ Ռիզա, «Մէշիքէթ» ի խմբագիր, այն անձն որուն, կ'ըսեն, Սուլթանը 25,000 ոսկի կաշտոք առաջարկեց Պոլսի վերագառնելու համար: Համաժողովը հազիւ ներկայ հսկողներ ամսոյ Յին իններորդ նիստին մէջ կարողացաւ աւարտել իր աշխատութիւններն: Հայկական խնդրոյ մասին Համաժողովոյ աշխատութեանց իւր եզրակացութիւն՝ Համաժողովոյ կողմանէ պարտաւանագ քաղ մը խըմբագրուեցաւ. Սուլթանի կառավարու-

թեան դէմ, և Համակրանաց բանաձեւ մը ուղղեալ առ Հայս, հետեւալ կերպով:

Հայկական ջարդերն՝ վերջին ժամանակներու մէջ գործուած եղեւնագործութեանց ակնեկն զագիրն ու նորկային եղած են. Համաժողովս առ այս իւր խորին համակրանքն կարսայայտէ Հայ սարաքաղաքացիներ, եւ կը փախափի որ Օսմանեան կառավարութիւնն ճանկեայ իւր պարսկականութիւնն յարգելու Հայերու իրաւունքն երաշխաւորեալ Պէոյիկի դաշնագրով, իրաւունք որ սարիւններու հոյսման ընթացքին մէջ անցնելոյ կը մնան: Համաժողովս կը յուսայ քեֆաղափակի որ աշխարհի խղճի խայրն ու ինքզնուական ցատուք պիտի հարկադրեն կառավարութիւնները՝ որ արմատական յոժուով մը սակ խընդրոյն:

Համաժողովը ուրիշ այլևայլ կարևոր խնդիրներով ևս զբաղեցաւ, ի մասնաւորի պարսաւեց Թրանսկայի մասին Բրիտանական կառավարութեան ընթացքն, որոյ մանրամասնութիւններն յառաջիկայ թիւով կը խոստանանք:

ՊԱՐՍԱՆԱՅ

Գանի որ խօսքը պարսաւանաց վրայ կը դառնայ, օգտուինք առիթէն հակիրճ տեսութիւն մը ընելու այս մասին:

Պարսաւանաց բանաձեւն, ժողովներու, համաժողովներու կողմէ կը տըրուի մեծամասնութեան բուհով, հանրային այն ամէն վատ գործիչներու դէմ որ հանրութեան վստահութիւնը շարաշար գործածած են:

Երբ Պետ մը իւր եղբայրը բանտարկել կուտայ ու կը տիրէ իւր գահուն, ինչ կրնայ սպասել ասկէ իւր հօտը. նմանապէս երբ անհատ մը, անձուէր քողին ներքեւ սրողեալ, հազարամէկ կեղծիքներով կը խաբէ միամիտ ժողովուրդը և անոր տուած բուհով կը յաջողի ձեռք ձգել հանրային պաշտօն մը, ինչ կը յուսայ ասկէ ժողովուրդը. ոչինչ. ընդհակառակը ատոնք երբ անգամ մը կը յաջողին գործին գլուխն անցնել, պետը կը սկսի բանաբարել իւր հօտին կրօնքն, պատիւն ու ինչքն. հանրային գործիչն կը կողպտէ անխցօրէն զինքն ընտրող ժողովրդին շահերն. բնականաբար ատոնց համար տրուած պարսաւանքն ո և է տպաւորութիւն չը թողուր անոնց մտքին վրայ, որովհետև ատոնք բռնաբարութիւն, գողութիւն, զեղծում ըրած օրէն ի վեր արդէն պախարակուած են: Ինչ օգուտ կրկին պախարակելու. ասոր միակ դարմանն է, շարեաց պատճառն անհետացնել:

Պէտք է լաւ ըմբռնել որ այդ գործիչներու գանկը թունաւոր միքրոպոսներու բոյն մը դարձած է, որոնք անմիջապէս կը թունաւորեն միամիտ ժողովուրդը, համաճարակ ախտի մը նման:

Կառավարութիւնը համաճարակ ախտը չը տարածուելու համար, ինչպէս որ ախտուորը կը չեզոքացնէ, նմանապէս ընկերութիւնը և կամ ժո-

(*) Տե՛ս «Նոր-Օր» թիւ 17, 18, 19:

(Շարունակելի)

զուգորդը, հանրային օգուտին համար, պարտականութիւն ունի այդ պարտաւորեալ գործիչը արտաբերել իւր միջավայրէն և եթէ կարելի է նորա գործիչները վերջնել: Ահա՛ ճշմարիտ պատիժը, ինչ որ կը տրամադրէ օրէնսգիտական փիլիսոփայութիւնը:

ՊԱՏԻԺԸ

Արդարև երբ ընկերութեան մը և կամ ժողովրդեան անդամներէն մին, ոճիր մը կը գործէ, ըլլայ ըսպանութիւն և կամ գողութիւն կ'ընէ, անմիջապէս հանրութեան անդորրութիւնը (օրտք թիւսը) կը վերջով ու ժողովրդեան վստահութիւնը կը խախտի իշխող կառավարութեան և կամ վարչութեան վրայ. այս պարագային մէջ կառավարութիւն և կամ վարչութիւն կը փութան՝ վրդովեալ անդորրութիւնը ապահովել և զեղծուած վստահութիւնը վերագործելու համար, ոճրագործին պատիժ տնօրինել: Ուրեմն կառավարութիւնը և կամ վարչութիւնը կը ստորինէ պատիժը՝ ոչ թէ ոճրագործէն վրէժ լուծելու նըպատակաւ, հապա հանրութեան կենսական շահերը անխախտ պահելու համար. օրէնսգիտական փիլիսոփայութիւնը կը տրամադրէ զայս:

Բայց աստի պատիժը ուրիշ օգուտներ ալ կ'ընծայէ, յաճախ ոճրագործին վարքը ուղղելու կը ծառայէ, այն պայմանաւ որ պատիժը համապատասխան ըլլայ ոճիրին, օրէնսգիտները կ'ըսեն թէ՛ «գող մը մինչև տասնէհինգ տարի չը պառկի զընտանին մէջ. մարդ չի կրնար ըլլալ»: Բայց կան ոմանք որք վարքերնին ուղղելու՝ աւելի կը վատթարացնեն: Պարտաւանայ բանաձևը եթէ օգուտ մը ունի (տօգիման) յիշատակարան ըլլալու կը ծառայէ ընկերութեան և ժողովոյ արձանագրութեանց մէջ, անցեալին և յառաջիկային համար. իմ կարծիքս է՝ որ ՊԱՐՍԱԽԱՆԱՅԻՒՆԻՆԻ ՏՐՈՒԻ ՈՅ ՄԻԱՅՆ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼԻ ՄԸ ԵՒ ԿԱՄ ԳՈՂԻ ՄԸ ԴԷՄ, ՀԱՊԱ ՆՈՅՆ ԻՆՔՆ ԱՅԴ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼԸ ԵՒ ԿԱՄ ԳՈՂԸ ՀՐԱՊԱՐԱԿԱԻ ՊԱՇՏՊԱՆՈՂՆԵՐՈՒՆ ԴԷՄ. քանի որ ունէ հանգամանք (ֆալիթ) չունին. զօրօրինակ փաստաբան մը մինչև իսկ պաշտօնապէս կը կարգուի կառավարութիւնէն՝ գող մը և կամ ամբաստանեալ մը պաշտպանելու, զոր ուշիմը կը հասկնայ, և արդէն յառաջիկայի «Նոր Օր»ի հարցերէն մին պիտի կազմէ աստի:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Վարչութիւնս կը փութայ հրապարակաւ իւր խորին շնորհակալիքն յայտնել առ Մեծ Տ. Գառնիկ Զարբեան, հաշուակալ Բամբէի երկաթուղոյ վարչութեան, նոյն ինքն յարգելի խորհրդական վարչութեան «Նոր-Օր»ի, այն ազգանուէր գործունէութեանը համար որով սիրած է առաջի օրէն ի վեր օգտակար ըլլալ Լսարան-Ընթերցատուն ընկերութեան սեփականութիւնն եղող «Նոր-Օր»ի կենսական յառաջիմութեանը համար: —Վսեմ. Եռտուֆ պէյ Ազիզ, միջազգային դատարար «Նոր Օր»ի վարչութեան նախագահ ամբարնոցէն վերագրուած ի Գահիրէ:

—Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Օրմանեան Սրբազան շնորհակալեաց նամակ մը զրկած է Գահիրէի Հոգատար Որբախնամ ընկերութեան Գործ. ժողովոյ Ատենապետ Տ. Նազարէթ Արզաբաթի, յորում կը յայտնէ յիշեալ ընկերութեան կողմանէ ի նպատակ որբերու կատարուած վիճակահանութեան արգիւնքէն՝ ի նպատակ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի որբերու սնտուկին զրկուած 40 ոսկեղ գումարն ստացած ըլլալը, և այս առթիւ իւր մասնաւոր գոհունակութիւնն արտայայտելով հանդերձ, կը գնահատէ յիշեալ ընկերութեան ջանքերն:

Ն. Ամեն. կը յարէ թէ որքան քաղցր եղաւ որբերու հասցէին զրկուած այդ գումարի արժէքն, նամանականգ այսպիսի պահու մը որ որբերու Հայրը Պ. Չանշեանց հրատարակուած Հայ որբերուն. կը վերջացնէ իւր նամակն քաջալերական խօսքերով ու օրհնութեամբ:

—Ուրախութեամբ կը լսենք թէ Եգիպտոսի Մարթոսեան մեծահամբաւ անտնուն ընկերութեան Տնօրէն Ազն. Տիրան էֆ. Փիլիպպոսեանց ունեցած է նորածին դասակ մը Զուգեցերիոյ մէջ, և կը փափաքի զայն Զուգեցերիացի հպատակ արձանագրել, ինչ որ ըստ օրինի է:

ՏԱՐԵՎԱՆ Բ. ՆԻՍ

ՀԱՅ ԱՆՔԱՆՆԵՐԵՐՈՒՆ ԸՆԿԵՐՈՒՄԸ 23 Սեպտեմբեր 1900

(Շար. Սախարով թիւ 10 և վերջ)

Նախագահի այս անաչառ գիտողութեանց դէմ Տ. Բիւրատ կարծես բողոքովին ինքնիմէ դուրս ելած յայտարարեց թէ հաշուոյ մասին այնքան խնայողութեամբ ըլլալու իրաւունք չունին, քանի որ իրենք քոչակաւոր պաշտօնեայեր չէին:

Ե. Աւագեան.— Միթէ՛ դուք ի սկզբնէն չէ՛իք գիտեր թէ ձեր ստանձնած պաշտօնը թոշակաւոր չէ այլ բոլորովին ազգասիրական. կանոնաւոր աշխատելու համար անպատճառ թոշակաւոր ըլլալու էիք, ուրեմն ես այժմ կրնամ ենթադրել թէ լրագրի գործն ալ ձեր անձնական շահերուն ծառայեցնելու նպատակաւ միայն հրապարակ հանեցիք, այդպիսի յայտարարութիւններով ինքզինքնիդ կը մատնէք. իսկ եթէ կարող չէիք օրինաւորապէս վարել գործը, կրնայիք հրաժարել:

Գործ. ժողովոյ ատենապետին վրայ տեղի ունեցած այս անվստահութեան ցոյցերուն մէջ տեղ Տ. Երզնկացեան՝ հարցում մը ուղղեց Տ. Նախագահին թէ՛ Տիրա Սանտալճեան գրեթէ 13 օր առաջ Կահիրէ եկած էր, միասին Տ. Փափազեանի պաշտօնատեղին գընացինք Ֆէյյումէն բերած երեք վեցամեայ բաժանորդագրիները վճարելու համար. հոն Տ. Սանտալճեան ինքրեց որ միանգամայն թէրղիպաշտեանի ընկալագիրն իրեն յանձնէ, որ փութայի փութով զրկած էր բաժանորդագրիները՝ արդեօք ստուգուեցա՞ւ այս խնդիրը:

Տ. Ս. Փափազեան. — Խնդրեց Տ. Ս. Բիւրատէ պատասխանել թէ արդեօք Ֆայումէն Տ. Թէրղիպաշեանի կողմանէ «Նոր Օր»ի համար զրկուած բաժանորդագրիներ գնանձած էր թէ ոչ: Սևրաս Բիւրատ.— Կարելի է, բայց չեմ յիշեր: Նման երկդիմի պատասխաններ տալով շուարեցաւ Տիրա Փա-

փազեան նկատելով որ այնպիսի պատասխան մը ո և է կերպով չէր կրնար դոհացուցիչ նկատուիլ և որպէս զի խնդիրը միջոցեան մէջ չմնայ ու պատեհութեամբ լուծուած ըլլայ՝ կըրկին շեշտելով հարցուց «թէ Ֆէյյումէն կամ ո և է ուրիշ տեղէ մը թղթագրող, մանտարութ, և կամ չէք անուամբ «Նոր Օր»ի համար դրամ գանձած էք թէ ոչ. Տիրա Սևրատ Բիւրատ բացարձակապէս հերքեց. սոյն հերքումէն վերջը Տիրա Փափազեան զարմանք յայտնեց թէ ինչպէս կրնար ըլլալ որ Տիրա Սանտալճեան երկու շաբաթ առաջ պաշտօնատեղիս գալով կը յայտարարէր՝ Ֆայումէն Տ. Թէրղիպաշեանի կողմանէ թղթագրող մը զրկուած ըլլալը «Նոր Օր»ի բաժանորդագրի անուան, որուն ընկալագիրն իսկ պահանջեց. ինչիւր մը որ ուշագրութեան հրաւիրեց, որու վրայ ձեզ հարցումներ ևս ուղղեցի:

Սևրաս Բիւրատ.— Ինչո՞ւ ուրեմն մինչև ցարդ լուծուի կը պահէք ու այսօր միայն կը յայտարարէք:

Ս. Փափազեան.— Երբ «Նոր Օր»ի վարչութիւնը ձեր ներկայացուցած թղթերուն վրայէն սկսաւ հաշուեկշիռ պատրաստել, քանիցս ձեզ անձամբ հարցուցի թէ՛ սոյն հաշուեկշիռէն դուրս տակաւին նշանակելի բաժանորդագրիներ կան: Զեր բացատրական պատասխաններէն վերջ երեւան ելան Տ. Զարեհեանի և Օր. Սոֆի Մանիսալեանի վճարումները, որոց վրայ լուռ անցած էիք. բան մը որ ստիպեց վարչութիւնս կրկին փոխել հաշուեկշիռը. երբ վարչութիւնս վերահասու եղաւ թէ՛ դրոյմաթուղթի և կամ այլ ծախքերու համար վարչութեանս կողմէն տրուած դրամն իրենց հասցէին չէր գործածուէր, երբ տեսաւ թէ անգրթաբար կը շարունակէք ոտնակոթ ընելու ընկերութեան և «Նոր Օր»ի կենսական շահերն, թէպէտ չեմ թոշատրեր որ շահագործուելու ենթակայ ըլլան. սպասեցի Ընդհ. ժողովոյ այս աւուր նիստին զձեզ անխաւսաւնելու համար յատենի ժողովոյ:

Ս. Բիւրատ.— Տ. Փափազեան իրաւունք չունի հոս խօսելու, քանի որ անգամոց շարքին մէջ արձանագրուած չէ՛ (այս մի)ոցին ելաւ ներկայից տու մարը քննել Տ. Փափազեանի անունը գտնելու ձեւով մը:

Նախագահ.— Տ. Փափազեան ամեն իրաւունք ունի, իբր ներկայացուցիչ վարչութեան «Նոր-Օր»ի, հոս խօսելու և բացատրելու մեզ այն ամեն բան որ Լսարան-Ընթերցատուն ընկերութեան սեփականութիւնն եղող «Նոր-Օր»ի կը պատկանի. եթէ իրաւունք չունենար իսկ, պիտի խնդրէինք իրմէ որ լուսաբանէր այս կէտերուն վրայ:

Տիրա Փափազեան, ի վերջոյ ցաւ յայտնեց թէ Տ. Բիւրատի նման անձնաւորութիւն մը յայտնած էր վստահութիւնը գրաւել իրեն և անգամներուն, որոց վրայ Տ. Բիւրատ սկսաւ նախատական խօսքեր ընել և հաշուեքնիչ Յանձնաժողովոյ վրայ կասկած յայտնեց, մինչև իսկ պահանջեց որ երկրորդ Յանձնաժողով մը կազմուի վերաքննելու համար հաշիւները:

Տ. Նախագահը նկատելով թէ Հաշ-

ուեքնիչ Յանձնաժողովոյ տեղեկագիրը կասկածի կենթարկուի, անմիջապէս ժողովականաց վստահութեան քուէին ենթարկեց զայն որ միանայնութեամբ յայտնեց ձեռամբարձ քուէով իւր վստահութիւնը տեղեկագրին վրայ:

Ս. յնուհետև Ընդ. ժողովոյ առջև կարգացուեցան Տ. Ատենապարի կողմանէ՛ նախ «Նոր-Օր»ի վարչութեան մի նամակն որ կը ծանուցանէր պարզապէս ի զիտութիւն Ընդհ. ժողովոյ Տ. Ս. Բիւրատի խմբագրութեան պաշտօնէ դադարուելը, երկրորդ նամակ մը Տ. Ս. Բիւրատի կողմանէ ուղղուած ՉՅ Սեպտ. Թուականաւ առ Մայր Դիւան, որով կը յայտնէր թէ այլ ևս ինք հրատարած եր խմբագրութեան պաշտօնէն:

Տիրա Նախագահը գիտել տուաւ թէ այլ հրատարականք պէ՛տք էր ողորդել առ վարչութիւն «Նոր-Օր»ի Հուսկ ուրեմն Տ. Նախագահը խնդրեց Տ. Ս. Բիւրատէ յանձնել ի պաշտօնէն ինչ որ իւր քով կը մնար Լսարան-Ընթերցատան գոյքերէն. Տ. Ս. Բիւրատ առարկեց թէ Գործ, ժողովոյ հրաժարականը չէ՛ ընդունուած և թէ ի պաշտօնի են. քանի որ վերջին նիստին մէջ որոշուեցաւ իրենց նկատմամբ շարունակել պաշտօնին մինչև նոր Գործ. ժողովոյ ընտրութիւն:

Տ. Նախագահ Գործ. ժողովոյ հրատարականք քուէի դրաւ որ միանայնութեամբ ընդունուեցաւ:

Ընդհ. ժողովոյ սոյն վճռական կամքին առջև Տ. Նախագահը յորդորեց զՏ. Բիւրատ յանձնել բոլոր գոյքերը, երբ սա ամեն ինչ յանձնած ըլլալուն յայտարարութիւնը ըրաւ, Տ. Նախագահը դարձեալ իրեն գիտել տուաւ թէ բոսթայի տուփին բանալին դեռ իւր քով կը գտնուի, և պնդմանը վրայ Տ. Ս. Բիւրատ յատենի ժողովոյ յանձնեց բանալին ևն:

Յաջորդ նիստը որոշուեցաւ ընել մէջ շաբաթ յետոյ որ է 30 Սեպտ. կիրակի օր իւր օրակարգի խնդրոց շարունակութեանը համար:

Նիստը փակուեցաւ ժամը 7 1/2ին:

Table with 2 columns: Name, Amount. Title: ԱՆԵՔԱՆՆԵՐԻՈՅ ԹՈՒԱՄՎԷՑԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Աղեքսանդրիոյ թուամիջի ընկերութեան արտադրած ֆետային վրայ դարձած է այսօր հանրութեան ուշագրութիւնը:

Ընկերութեան ինն ամսուան գործառնութեանց և հաշուոց ելևմտացոյցն մանրամասնութեամբ հրատարակուեցաւ:

Մենք բաւական կը համարինք ի ներքեւ դնել, միմիայն սոյն ելևմտացոյցի երկը և մտից համագումարը, առ ի հետաքրքրութիւն ընթերցողաց:

Table with 2 columns: Name, Amount. Title: Յունվար 15-ն ց Հոկտեմբեր 1900

Ինչպէս որ կը տեսնուի, Աղեք. թուամբ ընկերութիւնը ինն ամսուան միջոցին 32,309 ոսկեւոյ բաց մը ցոյց կուտայ և թերևս եթէ շարունակէ մինչև Հոկտեմբեր վերջ, 50,000ի մտնեալ:

Այդ հաշուով ընկերութեան բաժնետերաց ֆետայ մեծ է և թերևս անգարմաների:

Անցեալ տարի գործին սկզբնաւորութեան միջոցին բաժնեթուղթ մինչև 136 ֆրանգի բարձրացած էր 100էն. մինչդեռ այսօր 71 1/2 ֆրանգի իջած է,

Եղիպտոսի Հայ գաղթականութեան մէկ երրորդը կազմող Արաբկերցի Հայոց գաւառաբարբարէն կը բաղեցնէ հետեւեալներն:

ԱՐԱԲԿԻՐԻ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՑՆԵՐ

Առածներ, աստիճաններ, ամէծքներ, անկողնապաշտուածներ, ևլն:

- Անօթի բարձու կուսա կու.
- Այրած սրտին բաբ միթարանը.
- Աչքտ կար տա անունտ չէար.
- Ասեղ ձգելու տեղ չիկա'.
- յամէն բարի տակէն կ'եյա'.
- Բանը բանէն անցեր ա.
- Բանս բուրդ ա.
- Գողը գողէն գողցաւ Ասիած տեսաւ զարմացաւ.
- Գող' սիրաը գող.
- Էշնա հեծեր' էշ բնտանը.
- Էշը չի կերած խօտ-նուտտ նա գլօխը ցաւի կու.
- Էշը իշուն ըրիւ կապեա նա' ես յառաջը կասնա' ես փառուցը.
- Էշնիշ գիտա տա նաշնիշ ա.
- Էրես տուր' աստա' ալ կուգա կու.
- Էս ջուն' բաղլս այ' թուն.
- Էշ ցանեա' ան կու ըսողես.
- Լապ ըսեա նա լապապու հասինա կու.
- Խենթն ըսաց' խելոքն հաւտաց.
- Խենթը խրատն ինչ էնա, սեղը սապօնն ինչ էնա.
- Խենթին հմար յամէն օր տօն ա.
- Խելտին' ցուրտը մահանա.
- Խօսքը վեծին' չուրը պղտիկին.
- Կատվին ըսին թի բարտ զեղ ա, գնաց թաղեց.
- Կատուն յերեն հմար զէշ յերած չի տեսնար.
- Համ լանը' համ էթանը.
- Ճերմակ հարսին տուշմանները շատ կըլին.

- Մէկ չ'ան հազար շար կու խափան ա.
- Յընկածը ծակ ա.
- Յընծի նեղ' գըղի տեղ.
- Շունն յիշես նա աքին խաղցընա կու.
- Ուլուլիկ սուլուլիկ' ել տավարը վար էրա.
- Չեմ ուզեր' ճէպս ձգա.
- Չ'ան' չամիչ չ'ա.
- Չ'ա' բանա կ'անչա.
- Չ'ա չապիծին յօտուն փչա.
- Պատերը յընկան ունին.
- Ջուրը չի հասած եմանին հան ա նը.
- Ջուրը տանիլ' ծառու բերել
- Ջուր տեսնա նա ձուկ կըլի' ծակ տեսնա նա մուկ կըլի.
- Սոխ չեմ կիրեր թի, սիրտս այրի.
- Սոխին անուշը չըլի.
- Վենձ էշը ակոռը մոռցանը.
- Քիչ բաղցի' թէզ գարձի'.
- Քուրաը չըսեր թի թանտ թթու ա.
- Քարտ խորուն մի թաղեր.
- Յամպոկըցի կըցի կըցի
- դանն յարան կամթեցի
- արինն ելաւ չի վրացի:
- Ըստամպոլ' վա տակը պոլ
- խարբեթ' բամբակը պոլ...
- Յարաբկեր' բեր ու կեր':

Le Gérant J. MUNIER

Տպաւ «Միութիւն».— Թ. Ս. Փափագեանի

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապրին Պապ-Էլ-Պոսթան Հրապարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Զօրանցի դիմացը

ՕՂԱՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ ԴԱՆԻԷԼ ՀԱՅՍԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Զբօսարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղասէր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը. Ապրինի ընդարձակ հրապարակին զովագին օդը, վայրին սքանչելի դիրքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ԶԲՕՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաշնդած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկուն, ժամադրութիւն ըրած են, ու ժամերով կը վաչելեն երջանիկ ընկերութիւն մը:

Ամեն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զտու մանուար խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միտքերէ օչարակ. ամենէն դըժուարահաճներն անգամ պիտի գօհ մեան եփուսէն:

ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅՊԱՎԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՂԱՆՃԵԱՆ

Շարս Ապու-Սաղահ Նիեու-Տնիվեքսի ղեղաւորին դիմացը.

Օգտաւուն ու զուարճալի գիրք մաքուր ու վայելելի սպաս. համեղ ու անհարար կերակուրներու զանազանութիւն, անխաբախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով ահա՛ Գաղանձեան եղբարց ճաշարանը:

Ով' որ կ'օգէ, փորձի համար մէկ անգամ թող զիմէ, վատահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

ՊԱՆԳ ԼԻՕՆԷՉ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եղիպտոսի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վատահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բազաքապետութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ դրամական և ֆոնտի ֆոնտիէի, վիլ տը Բարիի գործողութիւններ, գանձումներ, Սմաական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհաստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին զիմել Նիւպաուի վրայ փաստարան Ռարթաքիի գրասենեակը:

ՉՈՒԼԻՉ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏՐԻԲՈՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԵՆԵԱՆԻ ՆԱԿԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդիւն զանազան գործիքներ ու կերպարաններ և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծոյակ, ևլն., յաճախորդները գոհացնող պայմաններով:

Ա. Զ. Դ

Ազգային Գալտեան վարժարանի համար Օգոստեան - Ուսուցչուհի մը պէտք ըլլալով, փափաքողը կրնան դիմել վարժարանս և բանակցել Տնօրինութեան հետ:

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ Գալտեան Երկս. վարժարանի

ՊԵԼԱՆԱՆ-ԹԻՃՄԱՆԵԱՆ ԸՆԿ. ԱՄԵՐԿԱԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻՂԱՆՑ ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ Ապօթի մեծ պողոտային վրայ Տայիտայի Սանիթի դիմացը, Յայկից Էլիսաբեթ գործիքներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ զիմոյ Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, զինքու չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն:

Մեր գործատուները մէջ կ'ուանա գուլին նաև ձևագիրութեան դասեր ամերիկեան ամենալիւրջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամանութեանց համար զիմել մեր գործատուներն:

ԱՍՍՄԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թի 9 գատիկունը:

Կը բժշկէ բերնի և ակույի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

Տ Պ Ա Ր Ա Ն

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրուիրագրեր, կանոնագիրներ, նա լակագլուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևլն.

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք եւ ձաշակաւոր սպազմութեամբ:

ՉՍՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ